ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17/5-15/3 ծածկագրով էլեկտրոնային համակարգով (ARMEPS) շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 17 մարտի 2017թ.
ժամը 15:00

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Գևորգյանը, հանձնաժողովի անդամներ Լ.Հարությունյանը, Դ.Հարությունյանը, Ա.Եղիազարյանը, Գ.Օսիպյանը, և հանձնաժողովի քարտուղար Հ.Ղարիբյանը:

Օրակարգ
հայտերի բացման և ուսումնասիրման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17/5-15/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և հասցեն		
	«Գարանսերվիս» ՍՊԸ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20	«ԱՐՍԱ և Ա» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Զ. Անդրանիկի 22/2	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
	Գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/		
1	64 761 583.33	61 512 000	53 959 608.33

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.9 ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ 1-ին մասի հայտը ներկայացնելու կարգի 4.3 կետով նախատեսված է եղել, որ գնային առաջարկի (Հավելված 4-ի) հետ միասին կցվի նաև ծառայությունների մատուցման գնացուցակը (Հավելված 4.1), սակայն «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի և «ԱՐՍԱ և Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծառայությունների մատուցման գնացուցակում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, և միաժամանակ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնացուցակը ներկայացված է Excel ֆայլով:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և պարզաբանման կարգով դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը: Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանում ստալաու

հաջորդող աշխատանքնային օրը ժամը 10:00-ին Մ.Խորենացի 3, 7 հասցեում ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

նախագահ	_____	Կ.Գևորգյան
անդամներ	_____	Լ.Հարությունյան
	_____	Դ.Հարությունյան
	_____	Ա.Եղիազարյան
	_____	Գ.Օսիպյան
քարտուղար	_____	Հ. Ղարիբյան